ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄԱ ԳՀԾՁԲ 24/02_» ծածկագրով գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Գյումրի « 03» «սեպտեմբերի » 2024թ.
ժամը 15:00

Մասնակցում էին Գնահատող Հանձնաժողովի

Անդամներ՝ Գրիգոր Գրիգորյան- ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Համազասպ Մարտիրոսյան- ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ,

Հասմիկ Հարությունյան- ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի Փաստաթղթաշրջանառության բաժնի պետ

Իրինա Ջանոյան- ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի Փաստաթղթաշրջանառության բաժնի ավագ մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմեն Համբարձումյան- ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

« ՀՀ ՇՄԱ ԳՀԾՁԲ 24/02_» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին.

Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմում, որը գտնվում է ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16 հասցեում: Գնման առարկա է հանդիսանում՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծ № 5 շենքի անբավարար տեխնիկական վիճակում գտնվող թվով 3 մուտքերի ուժեղացման-վերականգնման (ամրացման) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումը:

1. Գնանշման հարցման ձևով գնման հայտերի բացման մասին

1.1. Ընդունել ի գիտություն

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	«ԱԳԷԱ» ՍՊԸ	ՀՀ գ. Ախուրյան,	agea.llc@mail.ru հեռ.՝ +374 77 73 37 88,

բ/ «ՀՀ ՇՄԱ ԳՀԾՁԲ 24/02» **ծածկագրով մրցույթի** հայտարարությամբ սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պայմաններին չհամապատասխանող հայտեր չեն ներկայացրել:

1.2. «ՀՀ ՇՄԱ ԳՀԾՁԲ 24/02» **ծածկագրով մրցույթի հայտարարությամբ** սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը հայտարարությամբ սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

«ԱԳԷԱ» ՍՊԸ –ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.3. Հանձնաժողովի նախագահ՝ Գրիգոր Գրիգորյանը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակիցի գնային առաջարկը մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծ № 5 շենքի անբավարար տեխնիկական վիճակում գտնվող թվով 3 մուտքերի ուժեղացման-վերականգնման (ամրացման) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը՝

N	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային գինը /տառերով և թվերով/	Ինքնարժեք /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	«ԱԳԷԱ» ՍՊԸ	**8041092 (ՈՒԹ միլիոն քառասուն մեկ հազար իննսուն երկու) ՀՀ դրամ**	**8000000 (ՈՒԹ միլիոն) ՀՀ դրամ**	-	**8000000 (ՈՒԹ միլիոն) ՀՀ դրամ**

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. **« ՀՀ ՇՄԱ ԳՀԾՁԲ 24/02» ծածկագրով գնման ընթացակարգի համար ընտրված մասնակից ճանաչել** «ԱԳԷԱ» ՍՊԸ**-ին**

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում:

2. 4. Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին **տուժանքի մասին համաձայնագրերի (որակավորման ապահովում) և (պայմանագրի ապահովում) ներկայացնելուց հետո** ծանուցել պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Գրիգոր Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝ Համազասպ Մարտիրոսյան

Հասմիկ Հարությունյան

Իրինա Ջանոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմեն Համբարձումյան